



37. ՄԱԼԱՆՑՈՑ ԱՂԻ ՓԵՍԵՆ

Իրեքյ մարթ գանցին ճաղաց: ճաղցըպան երկըսվի աղուն աղաց, մեկին չաղաց, մութն էգար:

ճաղցըպան ասաց. - Էլե՛քյ, էրթանքյ, գյիշեր գաղեր չըգան, մե թալնեն:

Էն մեկն ասաց. - Ես կարծիմ տաս մարթ:

Էն մեկն էլ ասաց. - Ես տասնըխինգ մարթու չափ եմ:

Մեկն ասաց. - Ես քսան մարթու չափ եմ:

ճաղցըպան ասաց. - Օր էնպես կոչաղ եք, եսն էլ խը ծե կէլնենքյ քանսուն ու խինգ մարթ:

Հիրիկվան մեկ մարթ մ'տու տըռան վերեն, տաւո չըպանցին:

Մարթն ասաց. - Ախպերքե՛ր, տաւո պանցե՛քյ, գան, իմ աղուն աղամ:

Ներսի մարթեր անին. - Տաւ վո՞վ ես, ըլնիս թագավոր էլ, տաւո չընքյ պանա քու վըրեն:

Տըրսու մարթն լանգեն էգար, տաւո կոտոեց, տեղից թըռուց, էգան՝ պատ:

Ներսի մարթերուն սարսափ տարավ, չէլան՝ կանին հանեծ:

ճաղցըպան էտոնց ասաց. - Թե՞ տաւքյ կասեքյ՝ մենքյ մե մեկ տաս, տասնուխինգ մարթու չափ ենք, ընչի՞ չեքյ ըլնի, կայնի:

Տըրսու մարթն ասավ. - Էկե՛քյ, իմ պեռ տըրվե՛քյ իմ շանկու վըրեն, պիրեմ ներս:

Մեկն հիրար չանեց, չըգլխշըցան, վախեցան:

Էն էլ էնու պեռ էցկեց ուր ճըվու վըրեն, առավ, էկավ ներս:

Էն մեկէլներու աղուն ճաղցեն էխան, էնոր իլից վերեն:

Ասավ. - Ինչո՞ւ տառ չըպացիք իմ վերեմ:

Ասին. - Մենք վախեցանք, վախի խամար չըպացինք:

- Թե վախենալու խամար չեղեր, ես կը գամ, ծեր վըզքեր կը քաշեմ, ամա օր վախենալու խամար ա, ծե կը ներեմ:

Վերջ նըստավ, էնոր գըլխու վերեմ յարե՛մ կեր, ծեռ էտուր, էնու յարեն սըրպեց, էթալ գետին:

Էտոնք ըսկըսեցին ուրենց-ուրենց խոսել: Ասին.«Ես մարթ օր էսքան կոչաղ ա, ըսըրուց ո՞րն է հավել, օր ըսոր գըլխիս կոտրած ա»:

Էն մարթ ասավ. - Ի՞նչ ա կը խորխըտեք, ծի ասե՛ք, թե չե կելնիմ, ծեր վըզքեր կը քաշեմ:

Էն մարթեր ասին. - Մենք կասենք, թե էնորից կոչաղ ո՞րն ա, օր էնու գըլխիս կոտրած ա:

Ասավ. - Իմ խեր էլավ, ո՛ր տեղեն օր ծի ախչիկ ուզեց, ես չըխավնա: Վերծին մեկ օր էրկու դավրեշ էկան մեր տուն: Իմ խեր էտա դավրեշներուն ասավ. - Իմ տղեն ո՛ր տեղեն ախչիկ ուզեցի, չըխավնավ: Տու դավրեշ մարթ եք, կան գալանցող եք, տաւ գլիտեք՝ որտեղ լավ ախչիկ կա, ասե՛ք, մեկ պիրեմ իմ տղին:

Դավրեշներ ծեն չըխանին:

Իմ խերն էլ ծիկ ասաց. - Ա՛ռ, էնոնց թաղիս խա՛ց տար, թըղ չում խըլխուն մնան, էրթան:

Ես առա էնոնց խաց, թաղիս տարա հօդեն: Խաց կերան:

Ըն մեկ դավրեշ ըն մեկ դավրեշին ասաց. - Ես տըղային գլիտե՞ս, թե որ ախչիկ հարմար կը գա:

Էն մեկ դավրեշ ասավ. - Ես կը մտածիմ՝ ոչ մեկ ախչիկ էտոր հարմար չի գա, ընչի օր էսա շատ կոչաղ տըղա յա:

Էն մեկ դավրեշ ասավ. - Ընչի՞, տաւ չըտեսա՞ր, օր մենք գացինք Մալանցոց աղի կոներ, էնոր ախչիկ էս տըղայից շատ լավ էր:

Ասավ. - Հավատա՛, ես չըտեսա, փառդի հանեմ էր:

Էնպես ասելով՝ իմ սիրտ էտա ախչըկա վերեմ ավիրավ: Էլ ո՛չ ես դավրեշներաց խարցնեցի, թե Մալանցոց աղի տըներ որտեղն ա, ո՛չ էլ էնոնք ծի ասին:

Ես էլ էկա տուն, շատ մառախլի էղա: Օրավուր հետեւ շատ տկարացա մառախից:

էն մեկ օր իմ խեր խնայողները իմ ընկերներուն, թե՛ խնայողները իմ տղայից, թե ընչի՞նչ էնպէս զայիճցեր ա:

Ընկերներ ծի խնայողներին. - Քու խեր կասա՛ ընչի՞ ես ետպես զայիճցեր:

Ես էլ ասի. - Դավրեշներ էկան մեր տուն, իմ խեր ասաց էնոնց՝ մեկ լավ ախշիկըմ կընդեր, իմ տղային կարգեմ: Էտ դավրեշներ ծեն չըխանին, իմ խերն էլ չըխնայողներ էլ: Ես էլ խաց, թաղիս տարա դավրեշներուն հօդեն: Էն մեկ դավրեշն ասավ. «Գյիղե՞ք, թե էսա տղային որ մեկ ախշիկ հարմար կը գա»: Էն մեկ դավրեշ ասաց՝ չէ՛: Մյուս ասաց. «Մենք գացինք Մալանցոց աղի տուն, էնոր ախշիկ խորոտ էր, էն ախշիկ էսա տղին շատ հարմար կը գա»: Էտա ախշըկա մանախից ես էլ ետպես խիվանդացեր եմ:

Եփ օր ես պատմեցի ընկերներուն, թե ես ախշըկա մանախից եմ էղեր, ընկերներ գացին, իմ խոր պատմեցին, թե Մալանցոց աղի մանախից է ընցկուն էղեր:

Իմ խերն էլ էլավ, չորս մարթ կանչեց, ասավ. - Դե՛, էկեք ասեք՝ Մալանցոց աղեն որ երկրացի ա, էրթանք, տեսնինք:

Էտ չորս մարթ գընացին չում Վան, չում Պանդեշ, մարթ սալուխա չէտուր:

Ճամխեց Պարսկաստանա կողմեն էլ, հեջ մարթ սալուխա չէտուր:

Վերջ տանցավ ծի, ասաց. - Ո՛ր տեղ ճամխեցի, մարթ սալուխա չէտուր, չըկընդանք:

Ես էլ էլա, իմ խոր մեկ ծի՛մ կեր, ոչ մեկ մարթ չըգըխշըներ խեծներ, քաշեցի տառ, խեծա, իմ սիլախքեր կապեցի, հայրե մ՛ էլ ոսկի թալեցի ծիու թարք:

Իմ խեր ծիկ ասավ. - Ջավան, օր կերթաս, չէղի՛ Էտա ծիուն յան փետ գանես, յան ոտ գանես, քյե աշխըրից կը խանա էսա ծին: Թըխ ուր կամքիվ քյելա:

Ես էլ ճանապարհ ընգա: Ծին էլ էնպէս կամաց կը քյելա՝ խավիւ ծիւն ոտաց տակ չըկոտրեր:

Ես էլ հըռըկա, մեկ գանգիւ՛մ գարկի ծիուն:

Վերջ էլ չըտեսա՝ ծին ծի դիր տարավ: Մինչև իմ ուշատորթուն էկավ վերեն, ծիու գամ գավթիցի: Տեսա, օր մեկ տաշտըմ

կա՝ էլ որ մեկ կող կիրիշկեմ, մեր երկիր չերևար: Չիմացա, թե որ մեկ աշխարհն ա: Կամաց-կամաց գլորնացի մեկ խովվու մոտ:

Ասի. - Խովի՛վ, մեր ուղտեր պերած են, տալ չըս իմանար՝ ո՞ր տեղ տարած:

Խովի՛վն էլ ծիկ ասաց. - Ընչի՞, տալ չը՞ս գլորնա՝ էսի Մալանցոց աղի երկիրն ա, ըստեղ մարթ գողութեն չեներ:

Ես էլ ասի. - Փա՛ռք, տե՛ր Աստված, թե ես ինզա՞ Մալանցոց աղի երկիր, ի՛նչ կէլնի, թող էլնի: Իմ սիրտ խանգըստացավ:

Խովվուն ասի. - Խովի՛վ, քիչ խա՛ց պեր, ուտենք, ես անոթի եմ:

Խաց կերա, խովվուն խառցընեցի. - Խովի՛վ, էս օջխար վի՞ր օջխարն ա:

Խովի՛վն ասավ. - Էս օջխար Մալանցոց աղի օջխարն ա:

- Խովի՛վ, Մալանցոց աղի տուն ո՞ր տեղն ա:

Խովի՛վ ասավ. - Էսա տաշտի մեջ մեկ հախաբուրդ կա, ընոնց վարաներ գո՛ են տեղն ա, մեծ վարան կա վարաներու գլորիս, էն գո՛ Մալանցոց աղի վարան ա:

Ես գացի, վարանի տալու կայնա: Էկան, իմ ծիու գլորիս պըռնեցին: Տարան, ծին կապեցին, ընծի էլ տարան, ընտըցուցին վարանի մեջ, մինչև հիրիկվան լավ ծի պատվեցին, խաց կերցուցին:

Հիրիկվան էլի մեջ հավար էղավ, թե գողեր մեր ուղտեր տարան:

Աղեն էլ ծի տարավ, մեկ հալուշ վարան քընեցուց: Ձիգանից գաղտիկ էլան, գացին էնոնց հավարի հետև:

Խըլիսուն լուսցավ: Ես էլ չըմ քըներ, մինչև լուսուն իմ քուն չըտարավ մառախից:

Խըլիսուն աղի կնիկ էկավ, ծի կահվա՞ էպեր: Ես կահվեն չըխըմեցի: Գլորնաց, ծի խաց էպեր, ես խացն էլ չըկերա:

Աղի կնիկ իմ վերեն հըռըկավ:

Ասավ թե. - Տալ վո՞վ ես, ես Մալանցոց աղի կնիկն էլնեմ, քե խաց պերեմ՝ չուտես, կահվա՞ պերեմ՝ չըխըմես, տալ ո՞րի տղեն ես, մըսաֆըր: Իմ խա՞ց լավ չէր, չըկերար, կահվե՞ն լավ չէր, չըխըմար, ասա՛ խենք՝ ընչի՞ չըկերար, ընչի՞ չըխըմար:

Ես էլ ասի. - Ես էլ մեկ մարթուն տղղա եմ, թալան էղավ, ընչի՞ ծիկ հիմաց չերիք, ես էլ էրթեր հավարի հետև:

էկալ, իմ գլըլիխ պագյեց:

Ասալ, թե. - Մըսա՛ֆըր, մեզ ամոթ ա, օր տու էրթաս հաւարի հետև, կարելի ա, օր տու էրթաս, բրինդար էղիս:

Ես էլ էլա, խաց կերա, իմ ծին խեծա, գանցի: Գանցի ճանբախ, մեկ հուշի՜ր՝կ ոտ տվի իմ ծիու կող, ծին ծի փախցուց, չու՜մ խելքը էկալ վերես, ծիու գան՝ գանվթեցի, մեկ էլ տեսա՝ մեկ սարի՛մ գլըլիխ ծին կանալ:

Ես ոչ գիտեմ՝ ի՞նչ սար ա էն տեղ, օր իմ ծին կանալ: Ես էլ մտածեցի, ասի. «Իմ ծին ծի շատ ա հանե՛մ պիրեր, տանճամ, ետ էրթամ, թալան ետ ա մնացեր»:

Էլա, մինչև հիրիկուն կամաց-կամաց ետ տանջա, թալան չըտեսա:

Ըսպասեցի մինչև խըլխուն, չու՜մ կեսավուր: Նորեն թալան էկալ իմ հանե՛մ: Տեսա, օր հիսուն խատ ծիավոր, թալան տըված էնոնց հանե՛մ, կառնեն, կը գան:

Ես էլ կանչեցի էտ մարթերուն, ասի. - Էտա թալան կեսն տըվեք ծի, կեսն էլ ծե:

Էտ մարթեր հեջ ծե՛մ չըխանին:

Անգամ էլ կանչեցի, ասի. - Էտա թալան էրկու փայ ծի, փայը՜մ ծե:

Էտոնք էլը՜մ ծեն չխանին:

Անգամ մ'էլ ասի. - Իրեք փայ ծի, փայը՜մ ծե:

Կանչելու պես էտոնց մեջեն մեկ տաս խատ ծիավոր չոկվան, քչեցին վըր ծի:

Ես էլա, ասի իմ ծին տանե՛մ դեն, պերե՛մ դեն, տաքըյցուցե՛մ, օր կռվի մտնե՛մ:

Ծին էնու գլըլիխ էգար իմ սրտին, պոչն էլ էթալ իմ գլըլխուն, ես էլ չէր էրևեր վեր ծիուն:

Պըմվանք կռվու, էս տասն էլ ճանթեցի:

Մյուսներն էլ էկան իմ վերեն:

Կռվանք, մեկ սահաթից ետ տաս-քսան խատ մ'էլ ճանթեցի, մյուսներ փախան, ազատվան:

Ես էլ թալան տըվի իմ հանե՛մ, առի, էկա աղի տուն:

Էն ճանթըված մարթիրու ծիանք, զենքեր, ինչ օր կարցա՝ առի, էկա խետ:

Աղեն հուրիւզ ճանապարհով էր գանցե, մեռաստ չէկալ:

Աղեն տանոցավ, էկավ տուն:

Խառցեցին, թե՛ էսա թալան տանցուցող վո՞ն ա էղեր:

Ասին. - Քու մըսաֆըրն ա էղեր, գանցեր, թալան տանցուցեր:

Աղեն էնոր կընգան ասավ. - Ընչի՞ ճամխեցիր մեր մըսաֆըր թալանի հետևեն, թե էնոր վնաս մ'էղեր, յան զարկըվեր, յան բրինդար էղեր, տու ի՞նչըխ տ'ազատվեր իմ ծեռեն:

Կնիկ ասավ. - Երիտասարդ ջըհել մ'ա, ես չըկարցա գանվթեր, էլավ, էկավ:

- Դե՛, կանչե՛ք մեր էլի ռըսպիք, թըխ գան:

Կանչեցին, էնոնց ռըսպիք էկան, վարանի մեջ նըստան:

Խառցընեց աղեն ռըսպիներուն. - Էսա մըսաֆըրին ի՞նչ նվեր տանք:

Ըն մեկ ըխթիյար ասավ. - Աղա՛, թե տու հընդունես, ես գլի-տեմ՝ էնու նվերն ի՞նչ ա:

Ասավ. - Իհարկե, ես ծե պերեր եմ, օր պա՛ մ'ասեք: Ի՞նչ ասեք, ես կընդունեմ:

Ասավ. - Էնոր նվեր քու ախչիկ պիտ օր տանք:

Աղեն ասավ. - Իմ ախչըկեն կըսուրըմ կա, թե չէ ես խարիր ախչիկ կուրբան կենեմ էնոր:

Ասավ. - Աղա՛, քու ախչըկե կըսուրն ի՞նչ ա: Քու ախչիկ կըսուր չունի: Տու մեկ տիր ասեր ես՝ տը տամ իմ ախպիր լաճուն: Քու ախպիր լաճն էլ ծըռեր ա էսա էրկու տարի, ընգեր ա սարեր: Վով գա ուզա, տու կասես, թե կըսուր կա իմ ախչըկեն: Քու ախչիկ կըսուր չունի:

Աղեն էլ ասաց. - Օր տուք հարմար կը տիսնաք, ես էլ կը տամ:

Էլան, ախչիկ փըսակեցին վեր ծի:

Աղեն տաս խատ երիտասարդ էտուր ծի ընգեր, հըմեն օր կերթամ, նեճիր կենեմ, կը գամ: Իմ զոքանչ, իմ աներ, իմ աներ տը-ղեկներ ընցկում ծի կը սիրին, օր ես գլեր ճանապարհի կես, կը գլեն իմ հառեմ:

Ըն մեկ օր էկանք, մարթ չէկավ իմ հառեմ իմ աներոջ խըլ-ղից:

Ես էլ իմ ընգերներուն ասի. - Իմ աներոջ տուն խիվանդ չը-կե՞ր, հեսօր մեր հառեմ մարթ չէկավ:

Ընգերներ ասին. - Չէ՛, մարթ հիվանդ չըկեր:

Եկանք վարանի մեջ, օր տեսա իմ աներ, իմ զոքանջ նստած են, գլուխներ կախած են: Իշկեցի վարանի մեկել կուշտ, թե՛ մեկ չուլախ մարթըմ, էնու ջանտանկ էնպես սև, էնոր գլուխ խընջ կողովըմ, էնու ջանտանկ արընթըթախ, մինակ փոսթըմ կապեր գոգիք, նըստեր էտա տեղ, էնոր գլուխ տըրեր իմ կընգան ծընգան վերեն:

Ես էլ օր տեսա, ձի ասաց. - Հա՛, Մաննցոց աղի փեսեն տա՛ն Ես, օր էկեր Ես, իմ նշանածն առեր Ես:

Ու էթող, վարանից տալս ընգավ:

Աղեն էլ ասաց. - Ես կասեր՝ իմ ախչըկան էրըմ կա, տալ կասե՛ր՝ չէ՛: Դե՛ էկե՛ք, էսա չուլախի ծեռնից ազատե՛ք:

Աղեն էլավ, ռըսպիք կանչեց, էպեր:

Ասաց. - Էկե՛ք ճանապարըմ կընդեք, չուլախ թողեր, գանցեր ա տալս, քանի չէկեր:

Էնոնքն էլ ասին. - Աղա՛, թե քյե մեկ լավ ծի՛մ կա, մեկն էլ քու փեսին կա: Պեր քու ախչիկ, քու փեսեն խեծո՛ւ, ճանխա՛, թըխ էրթան:

Աղեն էլավ, լավ ծին էպեր, ուր ախչիկ խեծավ, Ես էլ իմ խեծա:

Ինգանք ճանապարհին, Էկանք հախալըրներու վերեն, Ես էլ ասի. - Ըստեղ քիչ խանգստանանք:

Ընտեղ ծիանք թողինք արծըցին, մենք էլ նըստանք, խաց-մաց կերանք: Մեկ էլ տեսանք՝ չուլախ էնտեխեն էկավ:

Չուլախ օր էկավ, մենք էլանք, ծիանք խեծանք, օր տը փախենք:

Էկավ, մե մոտացավ, չըկարողացանք փախիք, ծեռեն պըռծինք: Ես էլ տանցա, իմ ճակ քանչեցի, վեց խա տանանջա զարկեցի, ոչինչ օգուտ չէրաց, էկավ իմ խետ:

Ես էլ տանցա, իմ ռըմ տըրի մեջ իմ ծիու էրկու ականջ: Ռըմ տըրի մեջ էնոր սրտին, քանի իմ ուժն էր, զարկի, օգուտ չէրաց: Պըռնեց, իմ ռըմ կոտրեց: Ես էլ ծին տանցուցի, տը փախեր, խասավ էտանց, իմ ծիու պոչ պըռնեց: Ծեռ էթալ, ձի ծիուց էպեր տակ: Ձի իտիր գետին, իմ ծեռքեր կապեց, ձի տը սպաներ, իմ կնիկ չէթող: Իմ ոտներն էլ կապեց, ձի էթող էնտեղ, առավ իմ կնիկ, գլընաց:

Խոժիվ մ'երևաց էնտեխեն, կանչեցի խովըվուն, ասի. - Արի՛, իմ ծեռքեր, իմ ոտներ հարժըրա՛:

Խոժիվ էկավ, իմ ոտներ, իմ ծեռքեր հարժըրեց:

Խոժիվ ասավ. - Էնոր մենակ աչքերուն դըրբ կը դիպի, թե չէ՝ հուրհուշ տեղ օգուտ չէներ:

Ես էլ ասի. - Խոժիվ՛, էնի գյընաց ախըր, ապա էնու տեղ ո՞ր տեղն ա, դի՞ր կը մնա:

Խոժիվ ասաց. - Էնի ծուռ ա, երկու տարի ա՝ ընգեր ա սարեր, էնա՛ մեշի մեչ կը մնա:

Ես էլա, գացի մեշի մեչ, տեսա, օր իմ կնիկ նըստեր էր, էնի ուր գյըլիխ տըրեր էր վեր կընգան ծընգան, քըլներ էր: Կնիկ ծի ծեռով էրաց, թե՛ մի՛ գան:

Ես էլ կընգան իշմար էրի, թե՛ ծեն մը խամներ, ես գան էնու մոտ:

Ես գացի, կոճըմ տըրի գյետին, էնու գյըլիխ տըրի վըր կոճին: Պիրի, երկու շիշ տըրի կրակ, կարմըրցուցի, էտ շըշեր տըվի իմ սրտին, տըրի էնոր երկու աչիչ վըրեն, ընգա վերեն: Ինչքան իմ ուժն էր, ծի թողի վեր շըշին, շըշեր աչքեր ծակեցին, մտան կոճի մեչ: Էն քոռաց, քաշեց մեկ շիշ, էգար, տիպավ իմ գյըլիխ: Էսա էն յարեն ա, օր կը մնա չում էսօր: Ծաղցըպան՛, էսա էն յարեն ա: Ես ընգեր եմ էն տեղ մինչև հիրիկվան: Իմ կնիկ իմ գյըլիխ քավեր էր, կապեր էր: Հիրիկուն հիշարցա, առա իմ կնիկ, էկա: Մինչև ես էկա, իմ խեր աղութնից եցկած իմ գյեղացիք: Ծաղցըպան՛, ես էկեր եմ մեր գյեղ, իմ խեր նորեն տըրեր եմ աղութնի վերեն, էսա աղուն պերեր եմ, ըստեղ կաղամ, օր հօրեն խարիր մարթ կը գան իմ տեսութեն: Տիւ ընչի՞ տիւն չըք պաներ:

Ծաղցըպան ասավ. - Ես իրեք մարթ չուգեցին պանալ:

Էնոնք էլ ասին. - Մենք հախու տիւն չըպանցինք:

Մարթ ծեն չէխան: Առավ ուր աղուն, գյընաց տուն:

